

ՉՈՒՑԵՐԻԱՑԻ ՄԵՐ ՀԱՅԱՍՏԻ ԵԱԳՈՊ ՔԻՒՆՑԼԵՐ

Posted on October 19, 2014 by Keghart




Նազար և Էլիզաբեթ Քիւնցլեր

Category: [Opinions](#)




ԴՐՈՒՄԳ ՄԸ՝ ՀԱՃԸՆԻ ԵՒ ՀԱՃԸՆՑԻԻ ՄԸ
ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Դոկտ. Աբել Քհնյ. Մանուկեան, Չուկիցերիա, 19 Հոկտեմբեր 2014

Վերջերս ուսումնասիրութիւն մը ներկայացնելու ծրագրով կը թղթատէի զուկիցերիացի հայասերներու նախաձեռնութեամբ 1916-1944 թուականներու ընթացքին Պազելի մէջ հրատարակուած  "Mitteilungen über Armenien – Տեղեկութիւններ Հայաստանի Մասին" անունը կրող պարբերաթերթը: Ինչպէս թերթին անունն արդէն կը յուշէ, զուկիցերիացի հայասերները սոյն հրատարակութեան միջոցով աշխատած են ջերմ պահել զուկիցերիացի ժողովուրդին մարդասիրական զգացումները օսմանեան բռնատիրութեան տակ հեծող հայութեան նկատմամբ, հաղորդելով հաւաստի տեղեկութիւններ ժամանակի տխուր անցուդարձերուն մասին:

ԴՐՈՒՄԳ ՄԸ՝ ՀԱՃԸՆԻ ԵՒ ՀԱՃԸՆՑԻԻ ՄԸ
ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

Դոկտ. Աբել Քհնյ. Մանուկեան, Չուկիցերիա, 19 Հոկտեմբեր 2014

Վերջերս ուսումնասիրութիւն մը ներկայացնելու ծրագրով կը թղթատէի զուկիցերիացի հայասերներու նախաձեռնութեամբ 1916-1944 թուականներու ընթացքին Պազելի մէջ հրատարակուած  "Mitteilungen über Armenien – Տեղեկութիւններ Հայաստանի Մասին" անունը կրող պարբերաթերթը: Ինչպէս թերթին անունն արդէն կը յուշէ, զուկիցերիացի հայասերները սոյն հրատարակութեան միջոցով աշխատած են ջերմ պահել զուկիցերիացի ժողովուրդին մարդասիրական զգացումները օսմանեան բռնատիրութեան տակ հեծող հայութեան նկատմամբ, հաղորդելով հաւաստի տեղեկութիւններ ժամանակի տխուր անցուդարձերուն մասին:

Թերթը իր սիւնակներուն մէջ պարբերաբար տեղ տուած է նաեւ զուկիցերիացի միսիոնարներու կողմէ "Չուկիցերիոյ Հայասերներու Միութեան" փոխանցուած վկայութիւններուն՝ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարածքին իրագործուող բռնի տեղահանութիւններուն եւ ցեղասպանութեան վերաբերեալ: Հուսկ ան հետապնդած է գերազանց նպատակ մը՝ քաջալերել զուկիցերիացի բարեգործները յարատելելու համար իրենց մարդասիրական ներդրումներուն մէջ՝ ի նպաստ մահուան ճիրաններէն ճողոպրած հայութեան մա-ցորդացին, Մերձաւոր Արեւելքի զանազան երկիրներուն, մասնաւորաբար Սուրիոյ եւ Լիբանանի մէջ քաղաքացիական ապաստանարան գտած հայութեան վտարանդի եւ որբ զաւակներու գոյատեւման աշխատանքներուն:

Կարգ մը հետաքրքրաշարժ տեղեկագրութիւններու եւ յօդուածներու շարքին, ուշադրութիւնս կեդրոնացաւ կարճ պատմուածքի մը վրայ, որ տպագրուած էր նոյն թերթի 1938 թուականի Մարտ ամսուան 80-րդ թիւին մէջ: Պատմուածքը, որ կը կրէ "Հայուն Աստուածաշունչը" խորագիրը, ինծի համար մասնաւոր կարեւորութիւն կը ստանար ոչ միայն այն հանգամանքով, որ կը ներկայացնէր տոհմիս օրրանը հանդիսացող արծուերոյն Հաճընի եւ հաճընցիի մը կեանքի պատմութենէն դրուագ

մը, այլ նաեւ այն փաստով, որ սոյն պատմութեամբը, հոս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ վկայութիւնը, կը հանդիսանար մեզի համար ցարդ անյայտ մնացած գրական-վկայաբանական յուզիչ արգասիքներէն մին գոլիցերիացի քաջածանօթ հայաստր Եագոպ Քիւնցլերի (Jakob Künzler):

Հայոց Տեղասպանութիւնը վերապրած եւ որբութեան կրակէ շապիկը հագած սերունդի հաւաքական յիշողութեան մէջ դեռ վառ կը մնայ այս մեծ երախտաւորին՝ Եագոպ Քիւնցլերին անմեռ անունը: Գերմաներէն լեզուով շարադրուած պատմութեամբը, որ բուն շարժառիթն է առկայ յօդուածին, թարգմանաբար ներկայացնելէ առաջ, միանգամայն շահեկան պիտի ըլլար այստեղ համառօտ գիծերու մէջ անգամ մը եւս անդրադառնալ այս մեծ հայաստրին բազմաբովանդակ կեանքին եւ բեղուն գործին:

Եագոպ Քիւնցլեր ծնած է 1871 թուականին Չուկիցերիոյ Ափենցել Աուսերիոտեն քանթօնի Հոնտփիլ գիւղը: Պատանի տարիքին կը կորսնցնէ հայրը եւ աւելի ուշ՝ մայրը: Չրկուելով ծնողական գուրգուրանքէ, կը տրուի ազգականներու խնամքին: Դպրոցական տարիներու ընթացքին կը դիմէ տարբեր աշխատանքներու եւ Արաուի Շթայն քաղաքին մէջ կը սորվի հիւսնութեան արհեստը: Սոյնը սակայն գոհունակութիւն չի տար իր սրտին. հոգեւոր-կրօնական ներքին կոչում մը զինք կը մղէր ծառայական աշխատանքի, կոչում մը, որ պիտի դառնար իր համակ կեանքին գերազանց առաքելութիւնն ու բովանդակութիւնը: Անսալով այս խորունկ համոզումին, իր հոգեւոր կանչին, 1891 թուականին ան կը դիմէ Պազելի [“Diakonenhaus - Սարկաւագագ Տուն”](#) ուսումնարանը, ուր կը ստանայ հիւանդախնամի կրթութիւն:

1894-1899 թուականներուն Քիւնցլեր կը ծառայէ Պազելի քաղաքացիական հիւանդանոցին մէջ: Այս միջոցին, Ուրֆա մեկնած պազելցի բժիշկ Հերման Զրիստի միջոցով ան կը ծանօթանայ, յետագային, “Հայ ժողովուրդի դատին մեծ պաշտպան”, արդարօրէն “Հայութեան իրաւաբան” (Anwalt des armenischen Volkes) յորջորջուած Եոհաննէս Լեփսիուսի, որ զինք կը ներգրաւէ իր հիմնած “Armenisches Hilfswerk - Հայկական Նպաստամատոյց” կազմակերպութեան մէջ: 1899 թուականին Քիւնցլեր բժիշկ Հերման Զրիստի մօտ օգնականի պաշտօնով կը մեկնի Ուրֆա, ուր դեռ եւս 1897-էն սկսեալ կը գործէր հիւանդանոց մը, զոր հիմնած էր Ցիւրիխէն բժշկուհի մը՝ ժողգեֆին Ցիւրիխեր անունով: Ուրֆայի գոլիցերիական այս հիւանդանոցը կը գործէր Արեւելքի մէջ գերմանական առաքելութեան պատասխանատուութեան ներքոյ, եւ կը կազմէր մինչ այդ “Հայկական Նպաստամատոյց”-էն “Deutsche Orient-Mission - Արեւելքի Մէջ Գերմանական Առաքելութեան” անուանափոխուած կազմակերպութեան հովանիին տակ՝ Պերլինի մէջ ունենալով իր վարչական կեդրոնը:

Ահաւասիկ այստեղ է որ Եագոպ Քիւնցլեր, սկիզբը՝ իբրեւ բժիշկի օգնականի, ապա՝ բժիշկի բացակայութեան բերումով՝ բժիշկի, իսկ աւելի ուշ, այսինքն մինչեւ անոր լուծարումի թուականը՝ 1922, ղեկավարի պաշտօնով անձնապէս ինք է որ կ’առաջնորդէ մարդասիրական այս կարեւոր կեդրոնը:



Հայ ժողովուրդի պատմութեան ամենադժնդակ տարիներուն, Եագոյ Քիւնցեր իր կնոջ՝ Էլիզապէթի հետ կը դառնան հեղինակաւոր վկաներէն արեւմտահայութեան վայրագ բնաջնջումին, որ Երիտթուրքերու կառավարութեան կողմէ կանխամտածուած եւ բոլոր մանրամասնութեանց մէջ հետեւողականօրէն ծրագրուած մարդկութեան դէմ ոճիր մըն էր, բառին բուն իմաստով, գերազանցելով ցեղասպանութիւն մը ըլլալու բոլոր չափանիշերը:

Նախապէս, Համիտեան կոտորածներու ընթացքին, Ուրֆայի հայ բնակչութիւնն ալ տուժած էր թուրք-քրտական բարբարոսութիւններէն, տալով իր հազարաւոր զոհերը: Ուրֆայի մայր եկեղեցիին մէջ միայն՝ պատսպարած երեք հազար հայեր իրոյ ճա՛րակ դարձած են իրենց ճենճերող մարմիններուն վրայ քարիւղ ողողող թուրք եւ քիւրտ ջարդարարներու դիւային քրքիջներուն տակ:

Դեռ 1914-ին, ուղեւորութեան մը առթիւ, երբ Եագոյ Քիւնցեր Պաղտատէն կ'անցներ, կառքին մէջ ականմայ ականջալուր դարձած էր Երիտթուրք ղեկավարներէն Նեֆիս Պէյի չարաբաստիկ արտայայտութեան. “Մենք՝ թուրքերս, հայերը առանց բացառութեան՝ մասնակի կամ ամբողջութեամբ պիտի բնաջնջենք, կամ ալ զիրենք պիտի պարտադրենք տարագրութեան: Մեր կայսրութեան սահմաններուն մէջ անոնց հետ ապրիլը միանգամայն բացառուած է”: Դահիճին այս խոստովանութիւնը պիտի իրականանար շուտով եւ, ահաւասիկ, Եագոյ Քիւնցեր, արդէն 1915-ի գարնան, իր օրագրին մէջ պիտի նշէր. “Քաղաքի թուրքերը հայերու դէմ կը սպառնան գրեթէ ամեն օր”: Մահուան ստոյգ վտանգը կը թեւածէր օդին մէջ: Արդարեւ, երբ չարին կործանարար ալիքը Նոյն թուականի Օգոստոսի կէսերուն կը հասնի Ուրֆա, ձերբակալուելու կը սկսին տեղւոյն առաջին հայ ընտանիքները՝ խոշտանգուելով բանտերուն մէջ կամ ենթարկուելով դէպի Տեր Չօր տանող մահուան երթին, Եագոյ Քիւնցեր իր բոլոր միջոցներով, երբեմն Նոյնիսկ վտանգելով իր կեանքի ապահովութիւնը, կը փորձէ ահազանգել Հալէպի մէջ առկայ միջազգային դիւանագիտական ատեաններուն առջեւ, բայց՝ ի զուր:

Ա. Համաշխարհային Պատերազմի թանձր ստուերին մէջ, միեւնոյնն է, արդէն իսկ գոյութիւն չունեցող կամ զլացուած ամէն օգնութիւն շատ ու շատ ուշացած պիտի ըլլար արեւմտահայութեան կեանքն ու հայրենիքը փրկելու համար: Արեւմտեան մեծ պետութիւններու դիւանագիտութիւնը այս ողբերգութեան մէջ կը հետապնդէր այլ նպատակներ, հետաքրքրութիւններ, որոնց պողպատեայ կուռ օրէնքը չի զիջիր բարեկամական յարաբերութիւններու, զգացական իրավիճակներու, կրօնաբարոյական արժէքներու առջեւ: Անոր համար Նոյնիսկ չկան յարատեւ թշնամիներ ու բարեկամներ, այլ՝ կան միայն յաւիտենական շահեր: Արեւմտահայ ժողովուրդի մը կամ միացեալ Հայաստանի մը գոյութիւնը դուրս կը մնար միջազգային դիւանագիտութեան արժեչափերու ծիրէն: Պատմական փաստերը ցոյց տուին, որ Փոքր Ասիոյ տարածքին Օսմանեան Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը պահպանելը շատ ակելի առաջնահերթ էր արեւմտեան մեծ տերութիւններու տնտեսական-քաղաքական շահերուն համար, քան՝ իրենց հաւատակից ցեղասպանող ժողովուրդի մը փրկութեան գործը:

Ահաւասիկ, այս ահեղ տեսարանին ակամայ ականատեսն է որ կը դառնայ Եագոպ Զիւնցլեր: Եւ ամենահաւորը սակայն, ուղղակի անտանելին, անկարողութիւնն է. ունենալ ամբողջապէս ընդարմացած ըլլալու զգացումը՝ կարենալ ոչի՛նչ ընելու: Զարիքը վերացնելու փոխարէն, դատապարտուած ըլլալ զայն ծանր կաշկանդումով մը դիտելու, առանց կասեցնել կարենալու անոր կործանարար մոլուցքը:

Հակառակ այս ամենուն, Եագոպ Զիւնցլեր իր տիկնոջ՝ Էլիզապէթի հետ Ուրֆայի զուկցերիական հիւանդանոցը քանի մը տասնեակ կիներու եւ երեխաներու համար կը դարձնէ փրկարար ովասիս մը, անոր յարկին տակ պահելով դժոխքի բովէն պոկուած այդ խլեակները, տրամադրելով անոնց ինամք, սնունդ եւ այն ամենը ի սակաւէ անտի զորս ունէր:



Սակայն ամենամեծ ներդրումը, արդարեւ պիտի ուզէի ըսել՝ հերոսական արարքը զուկցերիացի այս մեծ բարեգործին, ութ հազար որբ երեխաներու փոխադրումն էր մահուան ստուերին ընդմէջէն դէպի լոյսը կեանքին եւ փրկութեան: 1922 թուականին Եագոպ Զիւնցլեր իր տիկնոջ եւ քանի մը այլ օգնականներու հետ, “Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան” յանձնարարութեամբ, կը ստանձնէ Կիլիկիոյ տարածքէն դէպի Սուրիա եւ Լիբանան՝ ֆրանսական հովանաւորութեան տակ գտնուող աւելի ապահով երկիրներ տեղափոխել հայ մանուկներու այդ թշուառ մնացորդացը:

Այնուհետեւ, 1923-1929 թուականներուն, Եագոպ Զիւնցլեր ամբողջապէս կը նուիրուի որբախնամութեան գործին, եւ կը վարէ Պէյրութէն շուրջ 30 քմ. հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս, Լիբանանի լեռներուն մէջ գտնուող Ղազիր աւանի որբանոցը: 1929-1931 թուականներուն ան կը դառնայ “Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան” վստահելի աշխատակիցներէն մին, եւ Պէյրութի ծովափնեայ շրջաններուն մէջ հաստատուած հայ ապաստանեալներու ճամբարներուն մէջ,

հեռանկարով, ահալասիկ, Եւրոպայի ընդհան-րա-պէս աւետարանական
Եկեղեցիներու միջավայրին մէջ սկսան հետզհետէ հիմնուիլ ծառայասիրութեան
ուսումնարաններ, որոնք իրենց հաստատութիւններուն տուին յունարէնի “diakonia” եզրը:
Չուիցերիոյ Պագէլ քաղաքին մէջ առաջին անգամ 1889-ին հիմնադրուեցաւ նման
ուսումնարան մը՝ “Diakonen-haus”, բառացի՝ “Սարկաւազաց Տուն”, իմա՝ “Ծառայողներու
Տուն” անունով: Հոս էր որ կը դիմէր Եագոպ Քիւնցլէր 1891-ին, ստանալու համար
հիւանդախնամի կրթութիւն:

